

Ֆ. ՆԱՆՍԵՆԻ ԱՆՎԱՆ Հ. 150  
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

**2021-2026ԹԹ**  
**ԶԱՐԳԱՑՄԱՆ**  
**ԾՐԱԳԻՐ**

Տնօրեն՝ Մ. Հայրապետյան

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	2
2. ՆԱԽԱԲԱՆ	4
3. ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ, ԴՊՐՈՑԻ ԿԱՐԳԱԽՈՍԸ, ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ	
3.1 ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ	5
3.2 ԴՊՐՈՑԻ ԿԱՐԳԱԽՈՍԸ	5
3.3 ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ	5
4. ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՄԽԵՄԱՆ	6
5. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	8
6. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
6.1 ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ	9
6.2 ԵՐԿԱՐՕՐՅԱ ԴՊՐՈՑԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ	11
6.3 ԴՊՐՈՑՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ: ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱԲԻՆԵՏՆԵՐԻ Ն ՊԱՏԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ	11
6.4 ԴՊՐՈՑՈՒՄ ՆՈՐԱՍՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ. ԱՐՏԱԿԱՐԳԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՖԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆՑՈՒՄ	13
6.5 ԵՐՐՈՐԴ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՆԵՐԴՐՈՒՄ	13
6.6 ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՈՒՄ	14
6.7 ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ	15
7. ԴՊՐՈՑՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՎԱՐՈՒՄ, ԴՐԱՆՑ ԱՆՑՈՒՄԸ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿԻ	16
8. ԴՊՐՈՑԻ ԲՅՈՒՋԵ, ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ	17
9. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ	
9.1 ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿՆԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ	19
9.2 ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	21
10. ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ	22
10.1 ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ	23
10.2 ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ, ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ	25
10.3 ԴՊՐՈՑՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՄԵԹՈՂԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐ	27
10.4 ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ, ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ	28
11. 21-ՐԴ ԴԱՐԻ ՏՆՕՐԵՆԸ ՎԵՐԶԱԲԱՆԻ ՓՈՒՍԱՐԵՆ	29

# 1. ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Երևանի Ֆ. Նանսենի անվան հ. 150 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ դպրոց) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հանրակրթական, տարրական և հիմնական ընդհանուր ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է: Դպրոցի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է, ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ հիմնադիր):

1. Դպրոցը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Երևան համայնքի Ֆ.

Նանսենի անվան համար 150 հիմնական դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպություն (պետեզիստրի վկայականի) գրանցման համարը 282-210.04540 տրված է 10.01.2003 թ:

2. Դպրոցն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կանոնադրությամբ (այսուհետ՝ կանոնադրություն):

3. Դպրոցի գտնվելու վայրն է ՀՀ քաղաք Երևան, Բակունցի 6:

4. Դպրոցը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Դպրոցն իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Դպրոցն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր հայերեն անվամբ կլոր կնիք, ձևաթղթեր և անհատականացման այլ միջոցներ: Կնիքը, ձևաթղթերը և անհատականացման այլ միջոցները ձևավորելիս հայերենին կարող են զուգակցվել անգլերենը և ռուսերենը:

6. Դպրոցն ունի ինքուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

7. Դպրոցը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի համապատասխան կարող է համագործակցել օտարերկրյա և միջազգային կազմակերպությունների հետ: Դպրոցն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

8. Դպրոցն ունի պաշտոնական կայք, որտեղ հրապարակվում են դպրոցի նախահաշիվը, ֆինանսական ծախսերի հաշվետվությունները, հաստիկացուցակը, թափուր աշխատատեղերը, հայտարարությունները և դպրոցի գործունեությանն առնչվող (տեղեկատվության ազատության մասին) ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված այլ տեղեկություններ:

9. Դպրոցը աշխատում է միջին հերթով, աշխատանքային շաբաթվա տևողությունը՝ հնգօրյա:

10. Դպրոցը սկսել է իր աշխատանքները 1970 թվականի սեպտեմբերի 1-ից՝ որպես թիվ 150 ռուսական միջնակարգ դպրոց:

11. Դպրոցը 2000 թ-ին անվանակոչվել է մեծ մարդասեր Ֆրիտյոֆ Նանսենի անվամբ, իսկ 2011 թվականին դարձել է Ֆ. Նանսենի անվան համար 150 հիմնական դպրոց:

12. Դպրոցը հիմնովին վերանորոգվել է 2005թ-ին:

13. 2000թ.-ից մինչ օրս դպրոցն իրականացնում է ներառական կրթություն, իսկ 2004-ից ԿԳ նախարարի հրամանով ճանաչվել է ներառական կրթություն իրականացնող փորձարարական դպրոց և վերապատրաստման կենտրոն:

14. Դպրոցի թվային տվյալները.

- \* Վարչական աշխատողների թիվը՝ 6
- \* Աշակերտների թիվը՝ 1096
- \* Դասարանների թիվը՝ 37
- \* Աշխատողների թիվը՝ 98
- \* Մանկավարժների թիվը՝ 83
- \* Ուսուցիչների թիվը՝ 56
- \* Ծնողական խորհրդի անդամների թիվը՝ 37
- \* Մանկավարժական խորհրդի անդամների թիվը՝ 83
- \* Մեթոդափոխումների թիվը՝ 8
- \* Աշակերտական խորհրդի անդամների թիվը՝ 92
- \* Կառավարման խորհրդի անդամների թիվը՝ 9
- \* Արտադասարանական խմբակներ՝ 33 ժամ:

## 2.ՆԱԽԱԲԱՆ

**«Մեր կյանքում կարևորը ոչ այնքան դիրքն է, որում մենք գտնվում ենք, որքան ուղղությունը, որով մենք ընթանում ենք»:**

Ժամանակակից հարափոփոխ աշխարհում ցանկացած իրադարձություն ալիքի պես փոխանցվում է աշխարհի մի ծայրից մյուսը՝ տնտեսական, ռազմական, ժողովրդական և մշակութային կառուցվածքները փոփոխելով: Աշխարհում տեղի ունեցող արագընթաց զարգացումները, ինչպես նաև բնական և մարդածին արտակարգ իրավիճակներն իրենց անմիջական ներգործությունն են ունենում կրթական համակարգի վրա՝ առաջադրելով գիտելիքահեն, տնտեսական և տեղեկատվական հասարակության պայմաններում գործող ու ապրող մարդու ձևափոխման նոր պահանջ: Հատկապես այսօր՝ պատերազմական վիճակի և համաճարակի այս ծանր օրերին, առաջ են եկել կրթության բովանդակության վերանայման ու արդիականացման խնդիրներ դասական աշխարհը քվանտային աշխարհի վերափոխման պահանջով: Ուստի այսօր իմ կողմից ներկայացվող «Զարգացման ծրագիրը» ես պայմանականորեն կանվանեմ նաև «**Զարգացող ծրագիր**», քանզի կյանքն ամեն օր նոր մարտահրավերներ է նետում, որում ապրում է այսօրվա դպրոցի սովորողը, ով վաղը կլինի երկրի ղեկավարը, ուստի դպրոցը պարտավոր է նոր լուծումներով դիմակայելու այդ ամենին:

Այսօր լուրջ փոփոխություններ են կատարվում նաև հանրակրթական համակարգի կառուցվածքում, քննարկման են ներկայացված նոր չափորոշիչներ, ստեղծվում են նոր կրթական ծրագրեր, ուսումնական պլաններ, դասագրքեր: Ձևավորվում է գիտելիքների և կարողությունների գնահատման նոր համակարգ: Իրականացվում են ուսուցիչների մասնագիտական և մեթոդական վերապատրաստման նոր ձևերով դասընթացներ, և ձևավորվում է ատեստավորման ու որակավորման նոր համակարգ: Մեր կրթության բարեփոխումները անկասկած մտել են մի փուլ, որտեղ անհրաժեշտ է հետադարձ հայացք գցել անցյալին, արժևորելով ձեռքբերումները, մատնանշելով կորուստները և գտնել այն դաշտը, որտեղ կարող է լավագույնս դրսևորվել մեր ազգային ինքնությունը, մեր դերն ու նշանակությունը ամբողջ աշխարհում:

Ես կարծում եմ, որ այս նոր մարտահրավերներին դիմակայելու համար Հայաստանի նման փոքր երկիրը պետք է դպրոցներում սերունդներին սովորեցնի խորացված ռազմագիտություն, մեդիագրագիտություն, ծրագրավորում, թվային գրագիտություն և խորացնի առարկայական գիտելիքներն ու հմտությունները: Այս ամենը առանցքային տեղ են զբաղեցնում իմ կողմից մշակված դպրոցի զարգացման ծրագրում:

### 3. ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ, ԴՊՐՈՑԻ ԿԱՐԳԱԽՈՍԸ, ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

#### 3.1 ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

Դպրոցի գործունեության **առարկան** յուրաքանչյուր սովորողի կրթության կազմակերպումն է հանրակրթական հիմնական և լրացուցիչ ծրագրեր իրականացնելու միջոցով:

Դպրոցի գործունեության **նպատակը** յուրաքանչյուր երեխայի, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքների ապահովումն է:

#### 3.2 ԴՊՐՈՑԻ ԿԱՐԳԱԽՈՍԸ

**«Կրթությունը այնտեղ է, որտեղ պետության զարգացման և անվտանգության շահերն են»:**

#### 3.3 ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցում ուսուցման գործընթացը կազմակերպել այնպես, որ նպատակուղղված լինի հավասարապես հասանելի ներառական և որակյալ կրթության քաղաքականության ապահովմանը:

Դպրոցի առաքելությունը պետք է լինի ոչ միայն որպես փիլիսոփայություն, այլ՝ շարժիչ ուժ, որ դպրոցը հասցնի այն մակարդակի, որ լինի՝

1. Դպրոց բոլորի համար, որտեղ պետք է կազմակերպել ճկուն անցումային գործընթացներ, որոնց իրականացման արդյունքում դպրոցում կարող են հաջողությամբ սովորել և՛ օժտված, և՛ սովորական, և՛ ներառված երեխաները:
2. Դպրոց, որը կլինի համայնքի հետ ակտիվ համագործակցող, ինչպես նաև՝ համայնքի սոցիալ մշակութային կենտրոն:
3. Դպրոց, որը ոչ թե նախապատրաստում է երեխային կյանքին, այլ բերում է այն գիտակցության, որ երեխան արդեն իսկ ապրում է այսօր՝ զուգահեռ կառուցելով ապագան:
4. Դպրոց, որտեղ յուրաքանչյուրն իրեն կզգա ապահով և ստեղծված բարենպաստ միջավայրն էլ կնպաստի յուրաքանչյուրի ինքնահաստատմանը և կզօժի զարգացման իր հետագիծը:
5. Դպրոց, որը յուրաքանչյուրի գիտակցության մեջ պետք է հաստատի, որ կայուն պետությունը սկսվում է հենց դպրոցից:

6. Դպրոց, որը կկարողանա սովորեցնել յուրաքանչյուրին մարդածին և բնածին արհավիրքների դեմ կայուն մնալ, որոշումներ կայացնել և շարժվել առաջ:

7. Դպրոց, որտեղ երեխաները ժամանակակից կրթությանը զուգընթաց, կստանան ազգային, համամարդկային և քրիստոնեկան արժեքների վրա հիմնված դաստիարակություն:


8. Դպրոց, որտեղ յուրաքանչյուրը պետք է գիտակցի, որ ինքն է զինվորը, հրամանատարը, վարչապետն իր երկրի և ինքն է պատասխանատուն երկրի զարգացման, անվտանգության, ինչպես նաև անհաջողությունների համար:

## 4. ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ

### ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՄԽԵՄԱՆ

Դպրոցի զարգացման ծրագիրն իմ պատկերացմամբ իր բովանդակությամբ, նպատակներով և խնդիրների լուծմամբ չպետք է լինի ստանդարտ և լոկ միայն գաղափարախոսություն կամ փիլիսոփայություն, այլ պետք է լինի ռազմավարական փաստաթուղթ, որը կհանդիսանա դպրոցի համար շարժիչ ուժ: Վերլուծական տեսանկյունից զարգացման ծրագրի հրամայականը պետք է լինի զարգացնող ծրագիր: Ըստ իս, դպրոցը զարգացնող ծրագիրը պետք է լինի կառուցողական, նպատակաուղղված, ունենա նորարարական ուղղվածություն՝ առաջնորդվելով փոխկապակցված քայլերի հաջորդականությամբ:

Ջարգացման ծրագրի կառուցվածքային սխեման հետևյալն է.





## 5. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Զարգացման ծրագրի իրատեսական լինելը պայմանավորված է դրանում ընդգրկված նպատակներով և խնդիրներով, որոնց կարևոր և անհրաժեշտ պայմաններն էլ իրավիճակների վերլուծություններն են: Իրավիճակների հստակ վերլուծությունների համար պետք է առանձնացնել դպրոցի ուժեղ և թույլ կողմերը.

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
<ol style="list-style-type: none"> <li>1. Հիմնովին վերանորոգված շենք</li> <li>2. Ջեռուցման համակարգ</li> <li>3. Մեծ մակերեսով և հարմարավետ բակ</li> <li>4. Մասնաշենքերի մեջտեղներում կան ներս ընկած բակ</li> <li>5. Սպորտային վերանորոգված դահլիճ</li> <li>6. Հանդիսությունների մեծ և հարմարավետ դահլիճ</li> <li>7. Ինֆորմատիկայի երկու կաբինետ</li> <li>8. Պատրաստական, գիտակ, բարեխիղճ մանկավարժական համակազմ</li> <li>9. Ծնողական մեծ համակազմ, որի հետ ճիշտ համագործակցության դեպքում կունենանք դրական արդյունքներ</li> <li>10. Աշակերտական լավ համակազմ և աշակերտական խորհուրդ</li> <li>11. Աշակերտների մեծ թիվ, ըստ որի, կատարվում է ֆինանսավորում</li> <li>12. Հարուստ գրադարան և գիտակ գրադարանավար</li> <li>13. Համընդհանուր ներառական կրթություն կազմակերպելու համար առանձնացված երկու դասասենյակ, հարմարեցված սանհանգույց և ըստ մասնագետների՝ համապատասխան առանձին կաբինետներ</li> <li>Դպրոցին երսում և դրսում առկա է թեքահարթակներ</li> <li>14. Շախմատի մեծ կաբինետ</li> <li>15. Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայության պրոֆեսիոնալ խումբ:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>1. Ֆիզիկայի կաբինետ</li> <li>2. Կենսաբանության կաբինետ</li> <li>3. Քիմիայի կաբինետ</li> <li>4. Սպորտային դահլիճ միջին մեծության</li> <li>5. Պասիվ վերազինված տեխնոլոգիայի կաբինետ աղջիկների և տղաների համար</li> <li>6. Հրաձգարան</li> <li>7. Կրթական նոր չափորոշիչներին և տեխնոլոգիաներին համապատասխան մանկավարժական համակազմի վերապատրաստում դպրոցում</li> <li>8. Նկուղների պատրաստում և պաստարանների համար</li> <li>9. Լրացուցիչ ֆինանսավորման բացակայություն</li> <li>10. Արտակարգ ընդունակություն ունեցող երեխաների համար կրթություն կազմակերպում</li> <li>11. Երրորդ օտար լեզվի ներդրում</li> <li>12. Դպրոցի գործունեության փաստաթղթային լիովին անցումն էլեկտրոնային տարբերակի</li> <li>13. Դպրոցի համակազմին վերազինել որենց գործունեությանն անհրաժեշտ օրենքների, կարգերի իմացությամբ:</li> </ol>

Զարգացման ծրագրում իմ կողմից նշված բոլոր թույլ կողմերը բնութագրող աշխատանքների վերլուծությունը նախընտրում եմ իրականացնել:

1. Մի քանի մակարդակներով, որոնցից հետո ամբողջը կհամադրվի և ստացված արդյունքներով կիրականացվի:Դրանք են.

- \* Հարցաթերթերի լրացում

- \* Փաստաթղթերի վերլուծություն

- \* Դիտարկումներ

\*Փոքր խմբերով քննարկումներ, որտեղ կընդգրկվեն սովորողներ, ուսուցիչներ,ծնողներ, աշխատանքներին մոտ կանգնած մասնագետներ:

2. Կազմված փաթեթի վերլուծությունը իրականացնել որոշակի ոլորտներում. Վերլուծության ոլորտներն են.

- \* Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան

- \* Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը

- \* Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը

- \* Կառավարման և խորհրդակցական մարմինները

- \* Մանկավարժական համակազմը

- \* Աշակերտական համակազմը

- \* Համայնք-դպրոց կապի էլ ավելի զարգացում

- \* Ուսումնական միջավայր

- \* Կրթության որակ և դրա բարելավում:

## **6.ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

### **6.1 ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ**

Հայաստանի Հանրապետությունը, ելնելով տարածաշրջանում իր աշխարհագրական դիրքից, դատապարտված է լինել հզոր, կայուն՝ ապահովելով իր անվտանգությունը: Հզոր, կայուն, անվտանգ պետությունը պետք է ունենա հզոր բանակ, հզոր տնտեսություն և նույնքան հզոր դիվանագիտություն: Գտնում եմ, որ այս գաղափարները հնարավոր են իրականացնել միայն բարձր որակավորմամբ և ամուր գիտելիքներով կրթություն ունենալով, որի հիմնասյունը դպրոցն է: Խոսքն իրականություն դարձնելու համար նպատակահարմար եմ գտնում ինչպես դպրոցում աշխատող ուսուցիչների, այնպես էլ հրավիրված համապատասխան մասնագետների միջոցով ձևավորել արտադասարանական խմբակներ և իրականացնել համապատասխան ուղղություններով ծրագրեր:

Այդ նպատակով իմ զարգացման ծրագրում ընգրկված են արտադպրոցական հետևյալ խմբակներ կազմակերպելու ուղղությունները.

1. Ռազմահայրենասիրական
2. Նոր տեխնոլոգիաներ
3. Առաջին բուժօգնություն
4. Տնտեսագիտություն
5. Դիվանագիտություն

1. Ռազմահայրենասիրական ծրագիրն իրականացնելու համար.

ա) Վերազինել դպրոցում գործող ռազմագիտության կաբինետը

բ) Ստեղծել հրաձգարան, որի համար կարող է ծառայել դպրոցի նկուղը

գ) Համագործակցել Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայի հետ

դ) Կազմավորել խմբեր-ջոկատներ, որում կընդգրկվեն 5-9-րդ դասարանների սովորողները և ջոկատները անվանակոչել տարբեր ժամանակ շրջանների մեր հերոսների անուններով:

Այս աշխատանքներն իրականացնելու համար կհամագործակցեմ Ֆ. Նանսենի անվան հ.150 հիմնական դպրոցի ռազմագիտության ուսուցիչ, փոխգնդապետ Ա. Ենգիբարյանի հետ:

Ռազմահայրենասիրական ծրագրի իրականացման համար կտրվի շաբաթական 8-10 ժամ, որին էլ համապատասխան կվարձատրվի դասավանդողը:

2. Նոր տեխնոլոգիաների ծրագրի իրականացման համար կձևավորվի 5-9-րդ դասարանների սովորողներից կազմված երկու խումբ, կտրվի շաբաթական 4 ժամ, կհրավիրվի մասնագետ: Ուսուցման ընթացքում նաև կհամագործակցենք ոլորտի առաջատար ԱՐՄԱԹ կենտրոնի հետ:

3. Առաջին բուժօգնություն ծրագիրն իրականացնելու համար կձևավորվի 5-9-րդ դասարանի սովորողներից կազմված երեք խումբ: Կտրվի շաբաթական 4-6 ժամ: Ծրագիրն իրականացնելու համար կհրավիրվի համապատասխան մասնագետ/ներ:

4. Տնտեսագիտություն ծրագիրն իրականացնելու համար կձևավորվի երկու խումբ և կընդգրկվեն 7-9-րդ դասարանի սովորողները: Ծրագիրն իրականացնելու համար կտրվի 4 ժամ և կհրավիրվի մասնագետ:

5. Դիվանագիտություն ծրագրի իրականացման համար կձևավորվի երկու խումբ, կընդգրկվեն 8-9-րդ դասարանի սովորողները, կտրվի 2-4 ժամ: Ծրագիրն իրականացնելու համար կհրավիրվի մասնագետ:

Նշված բոլոր ծրագրերն իրականացնելու համար մասնագետները կկազմեն ծրագրեր, որոնք կհաստատվեն տնօրենի կողմից, կտրամադրվեն դասասենյակներ և կստեղծվեն թեմատիկ անկյուններ, իսկ աշխատանքների արդյունքները կներկայացվեն միջոցառումների միջոցով: Այս ծրագրերը հնարավորություն են պատանիների համար ինքնադրսևորվելու և ձեռք բերելու լրացուցիչ գիտելիքներ, հմտություններ և կարողություններ:

## 6.2 ԵՐԿԱՐՕՐՅԱ ԴՊՐՈՑԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

**Հաջորդ նպատակը՝ ստեղծել երկարորյա դպրոց:**

1. Նոր Նորքի 4-րդ զանգվածը տարածքով մեծ է և խիտ բնակեցված, ծնողների մեծ մասը աշխատող է և աշխատանքային ժամը ավարտվում է ուշ, որի արդյունքում երեխաները մնում են ուշադրությունից և հոգածությունից դուրս: Երկարորյա դպրոցը հնարավորություն կտա թեթևացնել աշխատող ծնողների հոգսերը:
  2. Երկարորյա դպրոցը երեխաների համար կլինի վճարովի՝ ծնողների ցանկությամբ: Ժամանակի ընթացքում երեխաների քանակի ավելացմանը զուգընթաց կարող ենք ընդլայնել և շատացնել խմբերը:
  3. Երկարորյա դպրոցի իրականացման ժամանակ դպրոցի արտադասարանական խմբակների հաշվին կարող ենք նաև կազմակերպել նաև օտար լեզուների ուսուցում:
  4. Երկարորյա դպրոցը ծնողների ցանկությամբ կարող ենք նաև իրականացնել մշակութային այլ ծրագրեր՝ վճարովի հիմունքներով:
- Այս գործընթացը կարևոր է նաև նրանով, որ դպրոցահասակ երեխաները հենց դպրոցի միջավայրում ձեռք են բերում գիտելիքներ, հմտություններ և կարողություններ:

## 6.3 ԴՊՐՈՑՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ:

### ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱԲԻՆԵՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Հաջորդ կարևոր նպատակը դպրոցում ուսումնական միջավայրի ստեղծումն է, որը դասասենյակների և առարկայական կաբինետների, դասագրքերի, սարքավորումների, ՏՀՏ-ների, դպրոցում ձևավորված սովորեցնելու և սովորելու ավանդույթների, դպրոցի ներսում և դպրոցից դուրս առկա հասարակական հարաբերությունների ամբողջությունն է:

Սովորողի ուսուցման նպատակներին ուղղված գործունեության հիմքում կարող ենք կիրառել աշխատանք դասագրքով, համապատասխան գրավոր աշխատանքների իրականացում, խմբային աշխատանք, ֆրոնտալ հարցադրում, գործնական աշխատանքներ և իհարկե՝ լաբորատոր աշխատանքներ: Առանձնակի կարևորում են լաբորատոր աշխատանքների կազմակերպումը, որոնց ընթացքում ուսուցչի կողմից կատարվում է ցուցադրում, իսկ սովորողի կողմից լինում է դիտում, որոնք նպաստում են սովորողի զննման ունակության զարգացմանը: Նշվածն իրականացնելու համար ընտրվելուց հետո ձեռնամուխ կլինեմ ստեղծել հետևյալ կաբինետները.

1. Ֆիզկուլտուրայի 2-րդ՝ միջին մեծության սպորտային դահլիճ՝ 1-4-րդ դասարանների համար

**2. Ֆիզիկայի**

**3. Քիմիայի**

**4. Կենսաբանության**

**5. Տեխնոլոգիայի կաբինետ՝ աղջիկների և տղաների համար**

1. **Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին օրենքի երկրորդ հոդվածի համաձայն, այն է. հայրենիքի պաշտպանության պատրաստ երիտասարդության ֆիզիկական պատրաստակամության ապահովումը:** Ֆիզիկական դաստիարակությունը սովորողների համար իրականացվում է փոխադարձաբար միմյանց հետ կապված հետևյալ խնդիրներով.

1.Սովորողի ներդաշնակ ֆիզիկական զարգացում

2.Առողջության ամրապնդում, օրգանիզմի կոփում, բարձր աշխատունակության բարձրացում

3.Սովորողների միջև բարոյական բարձր հատկանիշների դաստիարակում

4. Հայրենիքի պաշտպանության պատրաստակամություն

5.Կենսականորեն անհրաժեշտ շարժողական ունակությունների և հմտությունների զարգացում (դրանք են՝ ցատկել, վազել, ուժ, դիմացկունություն, ճարպկություն, արագաշարժություն և այլն):

Դպրոցում գործում է 37 դասարան, կա մեկ սպորտային դահլիճ, որի պատճառով էլ դասացուցակով լինում են համընկնումներ տարբեր տարիքային խմբերի դասարանների միջև՝ հանգեցնելով դասի ոչ ճիշտ կազմակերպում:

**2. Ֆիզիկայի կաբինետի համար դպրոցում առկա է դասասենյակ, որն ունի իրեն կից՝ փոքր սենյակ:** Կառուցել բեմահարթակ , որի անհրաժեշտությունը այն է, որ դասի ժամանակ լաբորատոր աշխատանք կատարելիս ցուցադրվում են փորձեր և բեմահարթակից էլ ավելի տեսանելի է լինում բոլոր ուղղություններով նստած սովորողների համար: Կից սենյակն անհրաժեշտ է, որպեսզի սահմանված կարգով սենյակում նախատեսված պահարաններում պահվեն սարքեր, դիդակտիկ նյութերը, պլակատներ: Կաբինետում կտեղադրվի նաև էլեկտրոնային գրատախտակ, համակարգիչ և ցուցադրող սարք: Նպատակը՝ իրականացնել թեմաներին համապատասխան փորձեր, կատարել գրատախտակով աշխատանքներ և դիտել թեմաներին համապատասխան տեսանյութեր:

**3. Քիմիայի կաբինետի համար դպրոցում առկա է դասասենյակ, որն ունի կից սենյակ:** Կառուցել բեմահարթակ, որի անհրաժեշտությունը և նշանակությունը նշվել է նախորդիվ: Կից սենյակում առկա է լվացարան, չհրկիզվող պահարան (որտեղ պետք է պահվեն վտանգավոր նյութերը) և պահարաններ դիդակտիկ նյութերի, փորձանոթների և այլ սարքավորումների համար, այսինքն՝ այն ինչ տվյալ ժամանակի համար անհրաժեշտ է եղել: Առաջ եմ բերում դասասենյակի՝ կրկին կաբինետ դարձնելու կարևորությունը և նորովի վերազինումը, ինչպես նաև տեղադրել էլեկտրոնային գրատախտակ, համակարգիչ, ցուցադրող սարք և այլ անհրաժեշտ պարագաներ:

4. Ֆիզիկայի և Քիմիայի՝ իմ կողմից նշված ստեղծվելիք կաբինետների կողքին առկա է նաև 72 մ<sup>2</sup> մակերես ունեցող դասասենյակ, որում բեմահարթակ կառուցելուց հետո այն կարող է ծառայել որպես կենսաբանության կաբինետ, որն էլ կհամալրվի տվյալ առարկայի ուսումնական պլանով նախատեսված ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ դիդակտիկ նյութերով: Անհրաժեշտության դեպքում կտեղադրվի նաև էլեկտրոնային գրատախտակ:

6. **Դպրոցում գործում է տեխնոլոգիայի կաբինետ**, որն ունի որոշակի խնդիրներ, որը պետք է հազեցնենք անհրաժեշտ պարագաներով՝ դասապրոցեսը ավելի բովանդակալից կազմակերպելու համար, քանի որ ուսումնական պլանով նախատեսված է, որ տեխնոլոգիա առարկայի դասաժամին ամբողջ դասարանը պետք է բաժանվի 2 հավասար մասի:

## 6.4 ԱՐՏԱԿԱՐԳ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՄԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆՑՈՒՄ

Անհրաժեշտ է դպրոցում կազմակերպել և իրականացնել լրացուցիչ կրթական ծրագրեր՝ արտակարգ ընդունակություններ ունեցող երեխաների համար: Հայաստանի Հանրապետության Հանրակրթության մասին օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ դպրոցը կարող է մրցութային հիմունքներով պետական բյուջեից ստանալ լրացուցիչ ֆինանսավորում հետևյալ նպատակով՝ իրականացնել լրացուցիչ կրթական ծրագրեր՝ արտակարգ ընդունակություններ ունեցող երեխաների համար: Նպատակը իրատեսական է և հասանելի, քանի որ Ֆ. Նանսենի անվան հ. 150 հիմնական դպրոցում միշտ սովորել և սովորում են արտակարգ ընդունակություններով երեխաներ:

Կարծում եմ, որ այս ծրագիրը նոր շունչ և ակտիվություն կբերի ուսման նկատմամբ սովորողների շրջանակում, կձևավորի առողջ մրցակցություն, որի արդյունքում էլ կստանանք ուսման որակի աճ:

## 6.5 ԵՐՐՈՐԴ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՆԵՐԴՐՈՒՄ

Այս ուղղությամբ, հաշվի առնելով ժամանակակից պահանջմունքները, նպատակահարմար եմ գտնում դպրոցում ներդնել երրորդ՝ չիներեն լեզվի դասավանդում: Մեր օրերում շատ կարևոր է տիրապետել մի քանի լեզուների, քանի որ դրանով իսկ հնարավորություններ կընձեռնվեն մեր երեխաներին էլ ավելի հեշտությամբ լինել ներկայանալի միջազգային ամենատարբեր հարթակներում:

Չիներեն լեզվի դասավանդման համար առաջարկություն կներկայացնեմ մանկավարժական և ծնողական խորհուրդների հավանությանը, որից հետո առաջարկություն կներկայացնեմ լիազոր մարմնին, այսինքն՝ Երևանի քաղաքապետին և ԿԳՄՍ նախարարին՝ ստանալու նրանց համաձայնությունը:

ԿԳՄՍ նախարարության կողմից մշակված և հաստատված օրինակելի ուսումնական

այլանի համաձայն՝ 5-9-րդ դասարաններում դպրոցական բաղադրիչի ժամաքանակի հաշվին շաբաթական 1,5 կամ 2 ժամ կտրամադրվի չիներեն լեզվի ուսուցմանը: Այս ամենը կազմակերպելուց հետո լիազոր մարմնի և ԿԳՄՍ նախարարի համաձայնությամբ կդիմեն Հայաստանի Հանրապետությունում Չինաստանի հանրապետության դեսպանին Չինաստանի որևէ քաղաքի դպրոցներից մեկի հետ համագործակցելու համար, և, իհարկե, հնարավորության դեպքում համատեղ կազմակերպել կրթական և մշակութային ծրագրեր և միջոցառումներ: Այս գործընթացի մյուս կարևոր կողմը կայանում է նրանում, որ կբացվեն նոր աշխատատեղեր:

## 6.6 ՀԵՌԱՎԱՐ ՌԻՍՈՒՑՈՒՄ

2020 թվականի մարտի 13-ից ուսումնական գործընթացն իրականացվեց հեռավար, որը նոր խնդիրներ ու մարտահրավերներ նետեց ուսուցիչներին, ծնողներին և սովորողներին:

Ֆ. Նանսենի անվան հ. 150 հիմնական դպրոցի մանկավարժները ոչ միայն քայլեցին հեռավար կրթության նոր ձևին ընդառաջ, այլև շատ դեպքերում իրենց ետևից տարան ողջ կրթական գործընթացը: Չնայած նրան, որ նրանցից ոմանք ունեին ոչ միայն տեխնիկական միջոցի, այլև դրանց տիրապետելու խնդիր, սակայն անտրտունջ հաղթահարեցին բոլոր դժվարությունները:

Հեռավար ուսուցումը փոխում է ինչպես սովորողի, այնպես էլ ուսուցչի վարքագիծը: Արձանագրեմ այն փաստը, որ հեռավար ուսուցումը ուսուցչին տվեց հետևյալ նոր հնարավորությունները.

\* Ինքնակրթվեցին

\* Դասախոսության ձևաչափը սկսեցին քիչ օգտագործել

\* Ուսուցիչների լսարանը մեծացավ, համալրվեց և կամա թե ակամա դասին մասնակից դարձան սովորողի՝ կարելի է ասել ողջ ընտանիքը

\* Վերջապես ծնողը տեսավ ուսուցչի տքնաջան աշխատանքը

\* Ծնողը կարողացավ տեսնել իր երեխային դասապրոցեսում (թեկուզ լուռ, բայց վերլուծություններ արեց):

Ֆ. Նանսենի անվան հ.150 հիմնական դպրոցում հեռավար որակյալ կրթություն կազմակերպելու նպատակների ու խնդիրների լուծման համար կարևորում են. 1) Հեռավար որակյալ կրթության խնդիրների լուծման համար ընտրվելուց անմիջապես հետո կդիմեն ԿԳՄՍ նախարարությանը, որպեսզի Ֆ. Նանսենի անվան հ.150 հիմնական դպրոցն ընդգրկվի «Դասավանդիր Հայաստան» ծրագրում: Համագործակցելով ծրագիրն իրականացնող մենթորների հետ՝ կկազմվի ուսումնական ծրագրային այլաններ և ժամանակացույց, ըստ որի անմիջական օգնություն, աջակցություն կտրամադրվի բոլոր դասավանդող ուսուցիչներին նոր տեխնոլոգիաներով ուսուցում կազմակերպելու համար:

2) Հետևողականորեն կհամագործակցենք ԿԳՄՍ նախարարության ենթակայության տակ գործող ԿՏԱԿ-ում (Կրթական տեխնոլոգայի ազգային կենտրոն) գործող ՀՈՒԿ-ի (Հեռավար ուսուցման կենտրոն) հետ:

3) Ձեռք կրերենք համակարգիչներ և նոութբուքեր:

4) Հեռավար ուսուցման ժամանակ անհրաժեշտության դեպքում կտրամադրենք համակարգիչներ և՛ սովորողներին, և՛ ուսուցիչներին, քանի որ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հեռավար կրթության կազմակերպման կարգի համաձայն ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազայից օգտվելու առումով թե՛ սովորողներն ու թե՛ ուսուցիչներն ունեն նույն իրավունքներն ու պարտականություններն, ինչ առկա ուսուցման ընթացքում:

5) Հեռավար ուսուցում կկազմակերպենք նաև դպրոցում, եթե ուսուցիչը կամ սովորողը չունեն ինտերնետային կապի կամ համակարգչի հնարավորություն՝ հատկացնելով համապատասխան դասասենյակ:

## 6.7 ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունում 2005 թվականից սկսել է իրականացվել ներառական կրթություն **ԿԱՊԿՈՒ** երեխաների համար, Ֆ. Նանսենի անվան հ. 150 հիմնական դպրոցը 1-իններից էր, որ իրականացրեց ներառական կրթություն:

Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության, մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմամբ:

2000 թվականից միջև օրս դպրոցում իրականացվում է «Ներառական կրթություն»՝ սկզբում «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության հետ, արդյունքում 2004 թ-ից դպրոցը ԿԳՆ-ի կողմից ճանաչվեց «Ներառական կրթություն» իրականացնող փորձարարական դպրոց: 2007 թ-ին դպրոցը ճանաչվեց որպես «Ներառական կրթություն» ռեսուրս կենտրոն: Ծրագրի մուտքը դպրոց իր հետ բերել է բազմաթիվ կրթադաստիարակչական բարեփոխումներ: Դպրոցում գործում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությամբ ու դաստիարակությամբ զբաղվող «Մենք բոլորս հավասար ենք» խումբը, որի կազմում ընդգրկված են դպրոցի ծնողներ, լոգոպեդներ, հոգեբաններ, ուսուցիչներ և աշակերտներ:

Դպրոցի թիմը, համալրվելով լավագույն մասնագետներով, իրականացրել է աշխատանքներ բարձր մակարադակով, որի շնորհիվ էլ ձեռք ենք բերել ծնողների վստահությունը, և արդյունքում երեխաների թիվը տարեց տարի ավելացել է, իսկ շրջանավարտները ձեռք են բերել համապատասխան կրթություն:

Այժմ Երևանի Ֆ. Նանսենի անվան հ. 150 հիմնական դպրոցը համարվում է «Ներառական կրթություն» իրականացնող դպրոց կենտրոն:

Դպրոցը ունի ռեսուրս կենտրոն, որը պետք է էլ ավելի հազեցնել:

Ունենք հարմարավետ կաբինետներ, գերազանց մասնագետներ:



## 7. ԴՊՐՈՑՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՎԱՐՈՒՄ, ԴՐԱՆՑ ԱՆՑՈՒՄԸ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿԻ

Դպրոցն ունի հետևյալ փաստաթղթերը.

- \* Աշակերտի անձնական գործ
- \* Աշակերտական շարժի մատյան
- \* Աշակերտների հրամանագիրք
- \* Աշակերտական խորհրդի արձանագրությունների մատյան
- \* Մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյան
- \* Վկայականների բաշխման մատյան
- \* Առարկայական մեթոդական միավորումների արձանագրությունների մատյան
- \* Տարիֆիկացիոն ձևաթղթերի մատյան
- \* Ուսուցչի բաց թողած և փոխարինած ժամերի հաշվառման մատյան
- \* Դպրոցի կոլեգիալ խորհրդի արձանագրությունների մատյան
- \* Աշխատողի անձնական գործ
- \* Աշխատողների հրամանագիրք

Դպրոցը պետք է արդյունավետ օգտագործի գոյություն ունեցող նորմատիվ փաստաթղթերը, դրանց օրինակելի ձևերը, իր իրավասության սահմաններում մշակի հաստատության համար անհրաժեշտ փաստաթղթեր (ներքին իրավական ակտեր, վարքագծային կանոններ) և դրանք կիրառի աշխատանքի ընթացքում: Այս աշխատանքների գործընթացին պետք է մասնակցի դպրոցում աշխատող յուրաքանչյուր ուր, քանի որ շատ դեպքերում նրանց կողմից իրականացվում են խախտումներ օրենքների և կարգերի չիմացության պատճառով:

Նպատակահարմար եմ գտնում ուսուցչանոցներում ունենալ դպրոցի ուսումնադաստիարակչական, ֆինանսական գործընթացները կազմակերպելու համապատասխան բոլոր կարգերը և օրենքները թղթային տարբերակով, որը լինի հասանելի բոլորի համար, ինչպես նաև կկազմակերպվի համապատասխան սեմինարներ:

Աշխատանքային գործունեությունը պետք է կազմակերպել հետևյալ իրավական ակտերով.

- \*Կրթության մասին ՀՀ օրենք
- \*Հանրակրթության մասին ՀՀ օրենք
- \* Ներառական կրթության մասին օրենքով
- \*Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին ՀՀ օրենք
- \* Դպրոցի կանոնադրություն
- \*Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման և հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու և ազատելու կարգ

\*Ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման եվ ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդաստիճան փոխադրման կարգ

\* ՀՀ աշխատանքային օրենսգիրք

Արդի դպրոցում իրականացվում է դպրոցի գործունեության փաստաթղթերի թղթային տարբերակից անցում էլեկտրոնայինի: Որպեսզի այս գործընթացը կատարվի ճկուն և գրագետ, նախատեսում եմ իրականացնել փուլ առ փուլ համապատասխան օպերատորների միջոցով:

Անհրաժեշտ է ուշատրության կենտրոնում պահել դպրոցի պաշտոնական կայքէջը և անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը և կատարված աշխատանքները տեղադրել:

## 8. ԴՊՐՈՑԻ ԲՅՈՒՋԵ, ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Դպրոցավարության մյուս կարևոր ուղղությունը նրա բյուջետային հնարավորություններն են: Քանի որ դպրոցը հիմնականում ֆինանսավորում ստանում է պետական բյուջեից, ապա հաջողությունների և դժվարությունների հիմնական պատճառն այդ միջոցների բավարար և անբավարար լինելն է: Դպրոցն այսօր ֆինանսավորվում է աշակերտ թվով, և դասարանները, ըստ Կառավարության որոշման, տարական և հիմնական օղակներում ձևավորվում են առավելագույնը 35 սովորողներով:

Դպրոցի բյուջեի ծախսերն ունեն հետևյալ հիմնական ուղղությունները:

1. Աշխատավարձ և դրանց հավասարեցված վճարումներ
2. Եկամտահարկի վճարներ
3. Գրասենյակային և տնտեսական ծախսեր
4. Գույքի և սարքավորումների ձեռք բերման ծախսեր
5. Կապի ծառայությունների ծախսեր
6. Էլեկտրաէներգիայի, վառելիքի և ջեռուցման ծախսեր
7. Ջրմուղ-կոյուղու ծառայությունների գծով ծախսեր
8. Կոմունալ ծառայությունների վճարներ

Դպրոցի լրացուցիչ ֆինանսավորման՝ իմ կողմից նախատեսված ուղղություններն են.

1. Դպրոցի կանոնադրության 129-րդ կետի համաձայն՝ նպատակադրված եմ ակտիվորեն մասնակցել և դպրոցը տարբեր ծրագրերով ներկայացնել ՀՀ Կառավարության կողմից սահմանած մրցույթներին, հասնել հաջողության, որի միջոցով էլ, ըստ կարգի, ՀՀ պետական բյուջեից ստանալ լրացուցիչ ֆինանսավորում:
2. Դպրոցի կանոնադրության 18-րդ կետի համաձայն՝ հիմնադրի կողմից սահմանված է դպրոցում իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակները: Այդ

տեսակներից մեր համայնքին համապատասխան կլինի համակարգչային ծրագրերի և լեզուների լրացուցիչ ուսուցման կազմակերպումը: Այս գործընթացը կարելի է կազմակերպել ոչ միայն աշակերտների, այլ նաև համայնքի՝ այսինքն 4-րդ զանգվածի բնակիչների համար:

3. Համաձայն դպրոցի կանոնադրության 125-րդ կետի՝ հիմնադրի կողմից դպրոցին սեփականության իրավունքով ամրացված գույքը հիմնադրի անունից լիազոր մարմնի գրավոր համաձայնությամբ կտրամադրեմ վարձակալության ըստ նպատակային նշանակության, որը նույնպես լրացուցիչ ֆինանսի աղբյուր է:

4. Ընտրվելուց հետո կփնտրեմ և կգտնեմ այնպիսի շահագրգիռ անձանց, ովքեր իրենց կամքով դպրոցի համար կանեն բարեգործություն, նպատակային ներդրումներ և նվիրատվություններ:

5. Իմ կողմից ներկայացված զարգացման ծրագրի կարևոր նպատակներից է համայնք-դպրոց փոխհարաբերությունը և դպրոցը որպես մշակութային, սպորտային զարգացման կենտրոն դարձնելը: Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ուսումնական հաստատություններում վճարովի հիմունքներով հանրակրթական և/կամ մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաև այլ ծառայությունների իրականացման կարգի համաձայն, դպրոցում կարող ենք կազմակերպել և իրականացնել վճարովի հիմունքներով ծրագրեր և ծառայություններ, ոչ միայն սովորողների, այլ նաև քաղաքացիների համար՝ այսինքն, համայնքի բնակիչների հետաքրքրությունների և նախասիրությունների բարելավում, հոգևոր, ֆիզիկական, ստեղծագործական կարողությունների զարգացում և հմտությունների ձեռք բերում: Քանի որ մեր 4-րդ զանգվածը գտնվում է քաղաքի ծայրամասում, և թե՛ ավագ բնակիչների, և թե՛ երեխաների համար նպատակահարմար եմ գտնում վճարովի հիմունքներով կազմակերպել:

1. Համակարգչային ծրագրերի ուսուցման դասընթացներ
2. Օտար լեզուների դասընթացներ
3. Կավագործություն, փայտագործություն, նկարչություն
4. Տարբեր ձևերի սպորտային խմբակների ընդլայնում
5. Զգեստների մոդելավորում, կար ու ձևի դասընթացներ

Այս բոլոր ճյուղերի գործընթացը կազմակերպելու համար համապատասխան մասնագետներ կհրավիրվեն առաջին հերթին մեր 4-րդ զանգվածի համայնքից: Կարևորում եմ նաև համագործակցությունը Նոր Նորքի Հայորդաց Տան, Հայկանուշ Դանիելյանի անվան թիվ 3 արվեստի դպրոցի, Ս.Ասլամազյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոցի, Թերլեմեզյանի անվան քոլեջի, համար 4-րդ Արհեստագործակցական ուսումնարանի հետ: Անհրաժեշտության և պահանջի դեպքում կմեծացնեմ համագործակցության շառավիղները, խմբակների քաղակները և իրականացվող ծրագրերի, ծառայությունների տեսակները:

Ակնկալում եմ հետևյալ արդյունքները.

1. Համայնքի բնակիչների, ինչպես նաև դպրոցի երեխաների զարգացվածության բարձրացում, հմտությունների և կարողությունների ձեռքբերում
2. Նոր աշխատատեղերի բացում

3.Դպրոցը կունենա ֆինանսավորման լրացուցիչ աղբյուր/ներ, որով հնարավոր կլինի լուծել դպրոցի հիմնախնդիրները:

Այսպիսով, նշված ուղղությունների կազմակերպման և իրականացման արդյունքում ստացված շահույթի օգտագործումը նախատեսում էմ իրականացնել.

1.Մանկավարժական և վարչական աշխատողների ուսումնական ծրագրերին համապատասխան վերապատրաստման համար:

2.Մանկավարժների և վարչական աշխատողների՝ ՏՀՏ-ների ուղղությամբ վերապատրաստման համար:

3. Լավագույն սովորողներին նյութական խրախուսման համար:

4. Սոցիալապես ծանր վիճակում գտնող ընտանիքի՝ դպրոցում սովորողին օգնություն ցույց տալու համար:

5. Անհրաժեշտության դեպքում ձեռք կբերվի լրացուցիչ գույք և տեխնիկա:

## 9.ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

### 9.1ԿԻԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ


Ուսումնական հաստատության հանրակրթական հիմնական ծրագրերի հիմքում դրված է սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացը, այսինքն

\* Ուսումնական գործընթաց

\*\* Դաստիարակչական գործընթաց

Ուսումնական հաստատությունում ուսումնական գործընթացի առաջնային կարևորությունը ուսման որակն է:

% - որակ




Գրաֆիկորեն ներկայացրել եմ 2019-2020 ուստարվա 2-րդից 9-րդ դասարանների սովորողների ուսման որակը՝ տոկոսային հարաբերությամբ: Գրաֆիկի վերլուծությունից երևում է, որ 5-րդ դասարանից սկսած ուսման որակի տոկոսային թիվը սկսում է նվազել: Իմ կողմից երկար տարիների արված վերլուծության արդյունքում եկել եմ այն եզրահանգման, որ սովորողների ուսման որակի նվազումը պայմանավորված է մի քանի գործոններով.


1. Մինչև 4-րդ դասարան սովորողների ծնողների՝ հատկապես մայրիկների գրեթե 95%-ը հետաքրքրված է իր երեխայի ուսման որակով, ուշադիր է, պարտաճանաչ է, նույնիսկ կարելի է ասել ծնողների միջև ընթանում է «լարված մրցակցություն», քանի որ այդ տարիքային սովորողների ուսման որակը ապահովում են իրենք ծնողները՝ իրենց երեխաների հետ սովորելով և նույնիսկ նրանց փոխարեն տնային առաջադրանքները գրելով բարձր գնահատական ստանալու համար:


2. 4-րդ դասարանից սկսած լարվածությունը մի փոքր թուլանում է:


3. 5-րդ դասարանից սկսած յուրաքանչյուր ուստարում դասավանդվող առարկաների ծրագրերի ավելացմանն ու բարդացմանը զուգընթաց ծնողները սկսում են դժվարանալ օգնելու իրենց երեխաներին, անունը դնելով՝ իբր «մեծ ես, ինքնուրույն սովորի», արհեստականորեն թուլացնելով իրենց վերահսկողությունը, որն էլ սովորողի հասունացման շրջանում՝ 7-9-րդ դասարաններում, բերում է կրթության նվազամբ անտարբերության:

Այս վերլուծության արդյունքում էլ ուսման որակը 9-րդ դասարանում 4 անգամ նվազում է: Այդ իսկ պատճառով էլ դպրոցի զարգացման ծրագրի հիմքում դրել եմ **ուսման կազմակերպման և դրան զուգահեռ ուսման որակի ապահովման գործընթացները**: Ուսման որակի բարձրացման ապահովման համար նպատակահարմար եմ գտել հետևյալ սկզբունքները.

1. Ընդգրկվածություն  ուսման որակի ապահովման մշտադիտարկման գործընթացներում կարևորում եմ բոլոր շահառու մարմինների ընդգրկվածությունը, մասնավորապես ԾԽ-ի և ԱԽ-ի ներգրավվածությունը:

2. Թիմային մոտեցում  Կարոցում ուսումնական որակի ապահովման նկատմամբ գործընթացային և թիմային մոտեցման մթնոլորտի ստեղծում, որը կարող է ձևավորվել գործող որակի ապահովման համակարգի հասանելի լինելը բոլորին, ինչպես նաև ծնողների համար, որն էլ կապահովի ընդհանուր դիտարկմանը, ուսումնասիրմանը և հետադարձ կապին:

3. Հաշվետվողականություն և թափանցիկություն  Կարոցը կապահովի շահառուներին (այսինքն ուսումնական գործընթացի մասնակիցներին) տրվող տեղեկատվության մատչելիությունը, ճշգրտությունը և կարևորությունը: Դպրոցի գործող կայքը պարբերաբար կթարմացվի կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությամբ: Դպրոցի ուսումնական գործընթացում ներգրավված բոլոր մեթոդավորումները, մանկավարժահոգեբանական աջակցություն ցույց տվող թիմը միասնական կներկայացնեն եռամսյակային հաշվետվություններ, ըստ որի էլ կկատարվի գնահատում:

4. Արժեհամակարգի ստեղծում  պրոցը ուսումնական որակի ապահովման գործընթացներով և միջոցառումներով կստեղծի արժեհամակարգ և մշակույթ, որը հետևողականորեն կիրագործվի ուսման գործընթացի բոլոր մասնակիցների կողմից: Ստեղծված արժեհամակարգը հնարավորություն կտա ուսման որակի ապահովման գնահատման, վերահսկման և շարունակական բարելավման գործընթացի: Ներկայացված սկզբունքային 4 կետերի հիման վրա էլ մշակել եմ կանոնակարգ, որն էլ կապահովի հետևյալ նպատակների իրականացումը.

1. Ստեղծել կանոնակարգային և կազմակերպական բազա և ապահովել վարչական օժանդակություն
2. Պարբերաբար կազմակերպել միջոցառմանական առարկայական մրցույթներ (ծնողների ներկայությամբ)
3. Պարբերաբար կազմակերպել առարկայական մրցույթներ 2-9-րդ դասարանների սովորողների համար (ծնողների ներկայությամբ):
4. Հետադարձ կապի միջոցով բացահայտել սովորողների և շրջանավարտների գոհունակությունը կրթությունից, վերհանել առաջարկություններն ու դիտողությունները:
5. Ապահովել կրթական վերջնարդյունքների արդիականացումը՝ հաշվի առնելով նաև ԿԱՊԿՈՒԻ երեխաների ուսուցումը:
6. Ապահովել կապ որակի ներքին և արտաքին գնահատման գործընթացների միջև:
7. Բարձրացնել դասավանդման և ուսուցման որակը մանկավարժական համակազմի մասնագիտական որակների կատարելագործման, դասավանդման նոր մեթոդների և տեխնոլոգիաների ՏՀՏ-ների միջոցով:
8. Հնարավորության դեպքում հաստատել և ամրապնդել կապեր հանրապետության տարածքում գործող և միջազգային կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների միջև:
9. Տալ արդյունքներին գնահատական, անհրաժեշտության դեպքում կանոնակարգում կատարել փոփոխություններ:

## 9.2 ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

**«Պետության հիմքը դաստիարակված, կիրթ հասարակությունն է, որն էլ հավաքական կերպարն է դպրոցում սովորող յուրաքանչյուր անհատի դաստիարակության»:**

1997 թվականից աշխատելով Ֆ. Նանսենի անվան հ. 150 հիմնական դպրոցում որպես տնօրեն՝ իմ կողմից իրականացված վերլուծությունների արդյունքում գտնում եմ, որ սովորողների աշխարհաճանաչման ձևավորման, նրանց կողմից ազգային և համամարդկային արժեքների յուրացման, գիտելիքների և կրթական ծրագրերի ժամանակակից մակարդակի ապահովման համար խիստ կարևորում եմ սովորողների դաստիարակչական գործընթացը:

Դաստիարակչական գործընթացի ուղղություններն են.

1. Քաղաքացիական, բարոյական դաստիարակություն
2. Ռազմահայրենասիրական դաստիարակություն
3. Էկոլոգիական դաստիարակություն
4. Իրավական դաստիարակություն
5. Աշխատանքային դաստիարակություն
6. Ֆիզիկական առողջության դաստիարակություն
7. Գեղագիտական դաստիարակություն
8. Խոսքի մշակույթի և էթիկայի նորմերի դաստիարակություն

Դաստիարակության գործընթացն իրականացման ուղղությունների հիմքում առաջնայինը պետք է դնել հավասարը հավասարի, համոզման և դրական օրինակի մեթոդները, որոնք էլ դպրոցում պետք է կիրառել որպես մեկ ամբողջություն, այսինքն դրանք չեն կարող գործել մեկուսացված՝ անտեսելով դաստիարակության համակարգի թեկուզ որևէ մեկ կողմը: Վստահորեն կարող եմ ասել, որ Ֆ. Նանսենի անվան հ. 150 հիմնական դպրոցում տարիների ընթացքում ձևավորվել է դաստիարակչական գործընթացի արժեհամակարգ.

Նպատակը՝ իրականացնել ժամանակի պահանջներին համահունչ որակյալ կրթություն:

## 10. ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Հանրակրթական դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացմանն աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական խորհուրդներ: Խորհրդակցական բոլոր մարմիններն ունեն իրենց կանոնադրությունը, որը կազմում է դպրոցը՝ հիմք ընդունելով օրինակելի կանոնադրությունը: Կանոնադրությամբ սահմանվում են տվյալ մարմնի գործունեության լիազորություններն ու պարտականությունները: Շատ կարևոր է, որ խորհուրդներն ունենան իրական ինքնավարություն, ազատ լինեն իրենց գործողություններում՝ պահպանելով իրենց պարտականություններն ու իրավունքները:

## 10.1 ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

### «Սովորելու լավագույն միջոցը համագործակցությունն է»


Հանրակրթական դպրոցը սովորողների համար պարտավոր է ապահովել կրթական ծրագրերի կատարման անվտանգ և ապահով պայմաններ: Դպրոցում սովորողը պետք է պաշտպանված լինի ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումներից, մանկավարժական, ինչպես նաև այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքները կամ ոտնձգություն է կատարվում նրա պատվի և արժանապատվության նկատմամբ: Հանրակրթական դպրոցը պետք է ձևավորի այնպիսի սոցիալական, բարոյահոգեբանական, թափանցիկ միջավայր, որտեղ սովորողը լինի վստահ և ազատ արտահայտի իր սեփական կարծիքն ու համոզմունքները: Այս ամենի հիման վրա դպրոցներում ձևավորվում է աշակերտական խորհուրդ:

Դպրոցի աշակերտական խորհուրդը՝ սովորողների ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված ներկայացուցչական մարմին է, որը պետք է ստեղծվի ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան:

Ֆ. Նանսենի անվան հ. 150 հիմնական դպրոցի աշակերտական խորհուրդն ունի հարուստ կենսագրություն և տարիներ շարունակ օրենքով և սահմանված կարգով իրականացրել է իր աշխատանքները: Մեր դպրոցը Հայաստանի Հանրապետության դպրոցներում աշակերտական խորհրդի ձևավորման ժամանակահատվածում եղել է առաջիններից մեկը: Աշակերտների ակտիվ մասնակցության արդյունքում ձևավորվեց աշակերտական խորհուրդը և շարունակական սկզբունքով այն գործում է մինչ օրս՝ դպրոցի կենսական կյանքում ունենալով իր ուրույն դերն ու նշանակությունը: Աշակերտական խորհուրդը ձևավորվում է 6-9-րդ դասարանների սովորողներով, որի կազմում միշտ ընտրվել են ԿԱՊԿՈՒ երեխաները՝ հավասարը հավասարի սկզբունքով: Դպրոցի աշակերտական խորհուրդը իր ամենամյա աշխատանքային պլանի համաձայն (որը կազմում է աշակերտական խորհուրդը և հաստատում դպրոցի տնօրենը) կազմակերպել է բազմաբնույթ միջոցառումներ, մրցույթներ և իրականացրել այլ աշխատանքներ, որոնց հիմքում միշտ դրված են եղել հանդուրժողականությունը, համագործակցությունը, հայրենասիրությունը և ազգային արժեքները:



# ՆՊԱՏԱԿ




## 10.2 ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ, ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

«ԴՆՆ, սիրելի՛ ծնող, քո երեխայի առաջին ուսուցիչն ես»

Դպրոցի ծնողական խորհուրդը կազմավորվում է դասարանների ծնողական խորհուրդների նախագահներից: Դասարանական ծնողական խորհուրդները ընտրվում են ծնողական ժողովի առաջին նիստում և կազմված են նախագահից և 2-ից 4 անդամից: Դպրոցի ծնողական խորհրդի նախագահն ընտրվում է փակ քվեարկությամբ՝ ծնողական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Դպրոցի ծնողական խորհրդի լիազորությունները, պարտականությունները և իրավունքներն ամրագրված են դպրոցի կանոնադրությամբ: Դպրոցի ծնողական խորհրդի գործունեությունները և ընտրություններն արձանագրվում են ծնողական խորհրդի արձանագրությունների մատյանում, որը առկա է դպրոցում: Դպրոցի ծնողական խորհուրդը կազմված է 37 անդամից՝ ըստ դասարանների թվի: Դպրոցի դասարանական և դպրոցի ծնողական խորհուրդները, ըստ իս, պետք է լինեն կապող օղակ և շարժիչ ուժ դպրոցի ընդհանուր ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման և իրականացման համար:

# ՆՊԱՏԱԿ



## 10.3 ԴՊՐՈՑՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐ


Առարկայական մեթոդական միավորումները ստեղծվում են նույն առարկայի երեք և ավելի ուսուցիչների առկայության դեպքում: Կարող են նաև մեթոդական միավորումներ ձևավորվել հարակից առարկաների ուսուցիչներից: Դպրոցում գործում է 8 մեթոդական միավորում:

1. Հայոց լեզու և գրականություն
2. Օտար լեզվու (անգլերեն)
3. Ռուսաց լեզվու
4. Մաթեմատիկա (մաթեմատիկա, ինֆորմատիկա)
5. Հասարակագիտության (պատմություն, ՀԵՊ, հասարակագիտություն, ՆԶՊ)
6. Բնագիտության (աշխարհագրություն, քիմիա, ֆիզիկա, բնագիտություն)
7. Էսթետիկայի (երաժշտություն, ֆիզկուլտուրա, շախմատ, կերպարվեստ, տեխնոլոգիա, ազգային երգ ու պար)
8. Տարրական

### ՆՊԱՏԱԿ

Մեթոդական միավորման աշխատանքների կատարելագործում


### ԽՆԴԻՐՆԵՐ



## 10.4 ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ, ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

«Ուսուցիչը, ժամանակի ընթացքում անընդհատ գտնվելով շարժման մեջ, պետք է դառնա վերափոխման առաջնորդ»:

### ՆՊԱՏԱԿ



Ֆ. Նանսենի անվան հ. 150 հիմնական դպրոցում 1970թվականից առ այսօր աշխատում և արարում են հարգարժան ուսուցիչներ, ովքեր իրենց կյանքի լավագույն տարիները նվիրել են դպրոցին և իրենց սաներին: Ըստ տոկոսային վիճակագրության՝ դպրոցում դանդաղ և հաստատուն կարգով կատարվում է սերնդափոխություն, որը տնօրեն ընտրվելու դեպքում կիրականացնեմ հետևյալ սկզբունքով.

1. Երիտասարդ կադրերի ժամանակակից տեխնիկական գիտելիքների, հմտությունների գուցակցումը երկար տարիների դասական մանկավարժական փորձի հետ, որն էլ կբերի ակնկալվող արդյունք՝ օգնելով երկու սերունդներին էլ:

2. Ուշադրության և հարգանքի արժանացնել դպրոցում աշխատող ավագ սերնդի ներկայացուցիչներին՝ ավանդույթը սովորեցնելով երիտասարդներին:

3. Դպրոցում երկարամյա աշխատանքը ավարտող մանկավարժին/ներին արժանացնել պատվոգրի և դրամական պարգևատրման:

## 11. 21-ՐԴ ԴԱՐԻ ՏՆՕՐԵՆԸ

**21-րդ դարի դպրոցի տնօրենի անհրաժեշտ կարողունակություններն են՝**

- Վերլուծելու և համադրելու կարողություն
- Ինֆորմացիայի հետ աշխատելու կարողություն
- Հետազոտելու կարողություն
- Ձեռնարկատիրական կարողություններ
- Խնդիրները լուծելու կարողություն
- Անընդհատ սովորելու կարողություն
- ՏՀՏ կիրառելու կարողություն
- Ծրագրային առաջնորդական թիմ ստեղծելու կարողություն
- Հաղորդակցման կարողություն

### ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱԼԵՆ

**«Կրթել միտքն առանց սիրտը կրթելու**

**նշանակում է ընդհանրապես չկրթվել»:**

**Արիստոտել**